



## 2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

### ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆԵՐԸ

#### Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱՎՆԱՐԿ

Հավուց թառի նշանավոր վանքը գտնվում է այժմյան Կոտայքի շրջանում, Գառնի գյուղի մոտավորապես 4 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Գառնի գետի ձախ ձորակերպին: Վանքն իր անունը ստացել է նրա շուրջը տարածվող նույնանուն գյուղից, որի ավերակների մնացորդները, ընդարձակ տարածություն վրա, մինչև այսօր էլ պահպանվել են: Մտնենագրական աղբյուրներում վանքը կոչվում է Հալոց թառ, Հավու թառ և Հավուց թառ անուններով. ամենից գործածականը Հավուց թառ անունն է:

Վանքը բաղկացած է երկու խումբ հուշարձաններից, որոնք գտնվում են իրարից քառորդ կիլոմետրաչափ հեռավորության վրա: Արևմտյան խումբը գտնվում է անմիջապես ձորակերպին եղած բլրաձև բարձրության վրա, ըստ որի ձորի աջ ափից նայողին թվում է, թե մի մեծ, թևատարած հավթառ է բարձունքի կատարին. իսկ արևելյան խումբը գտնվում է սարահարթի վրա, անտառի եզրին:

Ոմանք այդ երկու խմբերը տարբեր վանքեր են ենթադրում՝ արևմտյան խումբը՝ համարելով Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը, իսկ արևելյան խումբը՝ Հավուց թառի Ամենափրկիչ վանքը: Սակայն այդպիսի կարծիքը միանգամայն անհիմն է, որովհետև ինչպես հայտնի է, Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը գտնվում է Հավուց թառի վանքից ավելի քան

7 կիլոմետր դեպի արևելք, Ելլիջա նախկին գյուղին մոտիկ, Վեղու շրջանում:

Թե ե՞րբ է հիմնադրվել այդ հուշականուն մենաստանը, ստույգ հայտնի չէ: «Տօնապատճառ» վերտառությունը կրող մի ձեռագրի հիշատակարանում, որը վերագրվում է ԺԳ դարին, ասվում է. «Շինեցաւ սուրբ և հուշակաւոր բազմաժողով մեծ մենարխ ան յն Հալոց թառ ի սուրբ թարքմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հալոց և ի Սեսրուփ վարդապետէ ԳԾ և ԻԳ ամի ծննդեանն Քրիստոսի, ի թագաւորութեան Հալոց Վասիշայ(հ)ոյ, ի թագաւորութեան Հոռոմոց Արկադեոսի և Ոսերիոսի, և ի պատրիարքութեան Յոհաննու Ոսկեբերանի»<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, Հայաստանի մի շարք վանքերի, դրանց թվում նաև Հավուց թառի և դրան մոտիկ գտնվող Այրիվանք—Գեղալդավանքի և Աղջոց Ս. Ստեփանոսի վանքերի հիմնադրումը ավանդաբար վերագրվում է Ս. Գրիգոր Լուսավորչին և Ս. Սահակ Պարթևին: Վերը մեջ բերված հիշատակարանն էլ, ամենայն հավանականությամբ, պետք է գրված լինի այդ ավանդությունների հիմաս վրա: Պետք է նշել նաև, որ Հավուց թառի վանքի սահմաններում կատարված հնագիտական հետազոտությունները չեն հայտնաբերել նյութական մշակույթի այնպիսի մնացորդներ, որոնք հաստատեն ինչպես վրան պատմական հիմքերը:

<sup>1</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., էջ 351:

Մխիթար Այրիվանցու վկայութիւնով շահագործող թաւաբուծիչները կառուցում է Քեղո Գեղորդի իշխանը: «Շինի և Հաւուց թաւն ի Գեղորդայ իշխանէն Քեղոյ»<sup>2</sup>, դնելով դրա կառուցումը 1001—1011 թվականների ժամանակաշրջանում:

Վանքում եղած մի արձանագրութեան համաձայն, որը մեջ ենք բերում ստորև, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին 1013 թվականին այստեղ կառուցում է մի կրկին եկեղեցի՝ ամենափրկիչ մասունքը պահելու համար. «Թուին ՆԿԻ. ի թագաւորութեանն Գագկայ և ի հայրապետութեանն Տեառն Սարգսի ես Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, նաև ի տէրանց աշխարհիս զանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն և ամենայն կազմութեամբ որ ի սմա քառադէմբ շորս անկեամբ յաջամբ և հակակամբ ի դիմանց և ի թիկանց. և տուաք յիշատակ անշնջելի արձանագրով և աշխարհակալ թագաւորի թղթովն և կայսերական կնքովն հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամական: Եւ ի նաւակատիս տաճարիս զոր շինեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյ՝ որ է Հայոց թառ, հանգստարան և աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ Մօր Տեառն մերոյ Սուրբ Աստուածածնին. և նորոգեալ հաստատեցաք վերստին զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն. աստ եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ Գրիգոր Վահրամ պատանին»:

«Վերոյ գրեալ արձանս գրեալ կայր ի վերայ Սուրբ Ամենափրկիչին արքայաշէն դարպասին, դուրս կոյս հարաւակողմն ի վերայ մեծ լուանցոյց պատուհանին, որ ի շարժմանէն խախտեալ կայր: ՌՃՀ (1721) թուին Աստուածատուր կաթողիկոսն կամեցաւ վերստին նորոգել. ի քակելն՝ ես մեղաւոր ծառայ սուրբ տանս՝ Քուրդ Յովհաննէս, իմ ձեռամբս վեր առի զարձանս զայն և գրեցի աստ»<sup>3</sup>:

Վերոհիշյալ արձանագրութիւնը տեղում չլինելու, ինչպես և նրա գտնվելու տեղի և արտագրելու հանգամանքների մասին՝ վանքի միաբան Քուրդ Հովհաննէսի տեղեկութիւնները մեջ ենք բերում Ալիշանից:

Արձանագրութեան մեջ նշված «վերստին շինեցի զեկեղեցիս» և «գոր շինեցաք զհայ-

րենիս մեր սուրբ եկեղեցւոյ՝ որ է Հայոց թառ» դարձվածքները որոշակի կերպով ցույց են տալիս, որ մինչև Գրիգոր Մագիստրոսի կողմից հիշյալ եկեղեցու կառուցումը, արդեն գոյութիւն ունէր վանքը, ինչպես այդ մասին վկայում է Մխիթար Այրիվանցին: Բացի այդ, Գրիգոր Մագիստրոսը այդ եկեղեցին շինում է որպէս «հանգստարան և աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին»: Դրանից էլ հետևում է, որ հենց այդ ժամանակներում պետք է Ամենափրկիչ մասունքը Դարույնի Ամենափրկիչ եկեղեցուց բերված լինի Հավուց թառի վանքը, որից հետո սկսել է կոչվել նաև Ամենափրկիչ Հավուց թառի վանք:

Հաջորդ տեղեկութիւնը Հավուց թառի մասին մենք գտնում ենք վանքի պարսպի արեւելյան պատի մեջ, մուտքից վերև դրված մի խաչքարի վրա, հետևյալ ձևով. «Յիշէք Քրիստոս զՀաբան զորդի Սմբատա զճառա... և ողորմեա ամէն-ամէն: Թվ. ՄԼ: էր» (1081):

Վարդան Բարձրբերդցի պատմիչը տեղեկացնում է, որ «պատանին Յովսէփ... որ էր պարսիկ ազգաւ ի զեղջէն, որ Նորաշէն կոչի ի սահմանս Դունայ», 1168 թվականին նահատակվելով Դվինում, ոմն Սարգիս նրա դին բերում և թաղում է Հավուց թառի վանքում<sup>4</sup>:

Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ, Զաքարե սպասալարի կողմից 1205 թվականին Լոռի քաղաքում հրավիրված ժողովին, ի թիվս այլ երեւելի հոգևորականների, մասնակցում էր նաև Հավուց թառի առաջնորդ Նղիա եպիսկոպոսը<sup>5</sup>:

Այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն ժԲ—ժԳ դարերում, ինչպես այդ ցույց են տալիս հնագիտական ուսումնասիրութիւնները, պետք է կառուցված լինեն վանքի զավիթը, Ս. Կարապետի անվան եկեղեցին, դամբարան-զանգակատունը, միաբանութեան բնակելի շենքերի մի մասը, որոնց կառուցման մասին բացակայում են մատենագրական և վիճակագրական տեղեկութիւններ: Ինչպես և բարձունքի վրա եղած խմբում գտնվող խաչարձանը՝ 1211 թվականին, Ս. Կարապետ կոչվող մատուռ-դամբարանը՝ 1213 թվականին, մի տապանաքար՝ 1246 թվականին՝ համաձայն նրանց վրա փորագրված արձանագրութիւնների, որոնց ավելի հանգամանորեն կանգրադանանք համապատասխան տեղում:

ԺԳ դարի վերաբերյալ Հավուց թառի մա-

<sup>2</sup> «Մխիթարայ Այրիվանցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860 թ., էջ 57:

<sup>3</sup> «Այրարատ, բնաշխարհ Հայաստանայց», տեղագրեաց Է. Ղ. Ալիշան, Վենետիկ, 1890 թ., էջ 354—355:

<sup>4</sup> «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 168:

<sup>5</sup> «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909 թ., էջ 162:

սին առանձին տեղեկություններ են պահպանվել նաև ձեռագրերի հիշատակարաններում. մեջ ենք բերում դրանցից անհրաժեշտ տեղերը կամ նշում աղբյուրները՝ ժամանակագրական կարգով.

«Աստուած ողորմի կզմոռի սորայ Գերգայ և իւր ծնողաց, ամէն: Թվականութիւնս Հայոց ՉԽԳ (1294): Զպատուական քահանէ զԱմենաազ որ հալալ վաստակոց իւրոց ըստացաւ սայ յիշատակ իւր և ծնողաց, որք կարդէք ասացէք Աստուած ողորմայ իւր և ծնողի իւրոյ, ամէն...»:

Ես անարժան և մեղուցեալ սուտանուն կոչեցեալ Ամենաազ հալալ արդեացի իմոց գնեց [ի] զսուրբ զԱւետարանս ի գաւառնէն Գառնու ի վանացն Հաւու թառ...»:

«Ի թագաւորութեանն բարեպաշտ և աստուածասէր թագաւորին Հայոց Հեթմոյ՝ մեծի և յաղթողի. և ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի. և յաշխարհակալութեան Ղազան զանին, և ի մերոյս նահանգի տերութեան խոշարին և Զաքարիայի որդոյ նորին և ի տիրութեան մերոյ սուրբ ուխտիս Հայոց թառայ պարոն Բիսութային և խոյանձային... ի դառն և յանբարի ժամանակի աւարտեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Գրիգորոյ նուաստ և փցուն գրչի, յոգնամեղ և փանաքի եղբար. ի սուրբ և ի հոչակաւոր և յաստուածաբնակ ուխտիս Հայոց թառ յորջորջելոյ՝ ընդ հովանեաւ Կաթողիկէ եկեղեցոյ Սուրբ Սիոնի և աստուածընկալ Սուրբ Ամենափրկչիս...»:

Վասն որոյ ես մեղաւոր Գրիգոր գրիչ աղաչեմ ի իշել ի Քրիստոս և զիս և զծնաւոյսն իմ: զԱրրահամ ուտուցիչն իմ և զՄխիթարիչ հայր իմ...»:

...Գրեցաւ աղաթամատոյցս այս ձեռամբ [Գր]իգորոյ: Ի թիվի ՉԽէ: (1298). ի մեծ մեծնաստանիս Հայոց թառ, ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչիս...»<sup>6</sup>:

Ստեփանոս Օրբելյան պատմիչը, խոսելով ժԳ դարի վերջերին Հայ Եկեղեցու ներսում ծագած դավանաբանական վեճերի մասին, տեղեկացնում է, որ Հայոց Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի դեմ 1296 թվականին գրած թուղթն ստորագրել է նաև Հավուց թառի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը<sup>7</sup>:

ԺԳ դարին վերաբերող Հավուց թառի վանքի մասին ոչ մի հիշատակություն չի պահպանվել:

6 Գարեգին աբեղյակոպոս Հովսեփյանց, «Հավուց թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ», Երուսաղեմ, 1937 թ., էջ 90—91:

7 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելյան աբեղյակոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910 թ., էջ 46:

Հավուց թառի մասին նկատելի չափով շատ են ժԵ դարեն եկող տեղեկությունները, մասնավաճառ ձեռագրերի հիշատակարաններում: Այդ իսկ տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում 1423 թվականին Գեղարզավանքում գրված մի ձեռագիր Մաշտոցի հիշատակարանում պարունակվող տեղեկությունները: Մեջ ենք բերում այդ հիշատակարանը լրջ կրճատումներով.

«...Աւրհնութեանց արհնաբեր գիրքս այս Մաշտոց մեք՝ նուաստ և անպիտանք Սարգիս քահանա և Դաւիթ ստացանք... յիշատակ ծնողաց մերոց և մեզ: Սարգիս ծերունի և պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւուց թառ զթուղթն պատրաստեաց, և ես՝ անյիշելի Դաւիթ գրեցի զգիրքս...: Եւ ընծայեցաք զսա ի սուրբ ուխտն Հաւուց թառ, ի դուռն Սուրբ Կաթողիկէին, և Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Յարութեան, և ամենազօր Սուրբ Ամենափրկչին և այլ սրբոց: Եւ եղև զըրոթիւն սորա ի նախադրական սուրբ ուխտն՝ ի մեծ Այրիվանս, և կատարումն գրոցս՝ յաստուածապահ զիւղաքաղաքս Գառնի, առ դրան սուրբ և հրաշափառ Կաթողիկէիս և այլ եկեղեցեացս, ի թվին ՊԶԲ (1423), ի հայրապետութեան Տեառն Պաւղոսի Գառնեցոյ՝ սրբազան կաթողիկոսի, և ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Հաւու թառ՝ հեղահոգի և սրբասէր և մաքրամիտ և մեծազգի արհիպատիւ եպիսկոպոսի Տէր Զաքարիա...: Յիշեցէք ի սուրբ պատարագն զՍարգիս քահանայն, և զծնողսն նորա զՄեհհանն և զԱստղիկն, և զիս զբազմամեղ սուտանուն քահանայ զԴաւիթ գրիչ, և զծնողսն իմ...»<sup>8</sup>:

Սանահնի վանքում 1424 թվականին գրած մի այլ ձեռագիր Ավետարանի հիշատակարանում նույնպես տեղեկություններ են պարունակվում Հավուց թառի մասին.

«...Սպիտակացեալ ալեալք և լուսափայլեալ հոգւով, ի տես համբակաց մաքուր կուսութեամբ սրբասէր քահանայս Մատթէոս, յԱյրարատեան գաւառէս, սնընդեամբ ի բարձրադիտակ յականաւոր և ի գերահոչակ սուրբ ուխտէն Հայոց թառոյ, առ որ մեծաւ փափազմամբ ցանկացող եղեալ այսմ աստուածաշունչ կտակի և Աւետարանի...»:

Արդ, եղև զբազմաթիւ սորա ի շրջագալութեան Հայկազեան տումարի ՊԶԳ (1424), յամի որում եղև սաստիկ մահտարածամ, առ ի խրատ մեղաց մերոց: Ի թագաւորութեանն Վրաց Ալէքսանդրեա, և ի բռնակալութեան տանս Հայոց թուրքման Սքանդարի, և մեզ թագաւորելոյ՝ Քրիստոսի

<sup>8</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401—1450 թ. թ.), Երևան, 1955 թ., էջ 303—304:

Աստուծոյ, ի հայրապետութեան Տեան Պաղտի: Յաստուածապահ գաւառիս Լաւոյ, ի յերկնահանդէս, մեծարգոյ և ի գերահռչակ ուխտի Սանահին վերաձայնելոյ...»<sup>9</sup>:

Քովմա Մեծոփեցին տեղեկացնում է, որ ինքը և իր ընկերակից աշակերտները, իրենց ուսուցիչ՝ մեծանուն վարդապետ Հովհաննես Մեծոփեցու հետ միասին այցելել են Հավուց թառի վանքը<sup>10</sup>: Տեղում պահպանված մի արձանագրութիւնից իմացվում է, որ Հովհաննես Մեծոփեցու իր աշակերտների հետ Հավուց թառ այցելութիւնը տեղի է ունեցել 1407 թվականին: Այնուհետև Քովմա Մեծոփեցին տեղեկացնում է, որ երբ վախճանվում է Հովհաննես Մեծոփեցին, նրա աճյունը բերում և ամփոփում են Հավուց թառի վանքում, «ի հանգստարանի նոր վկային Յովսէփայ և Նղիա վարդապետին ի մեծահանդէս ուխտն Հայոց թառ»<sup>11</sup>:

Նույն Մեծոփեցու վկայութեամբ, 1411 թվականին Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ընտրութեանը մասնակցում էր նաև Հավուց թառի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը: Իսկ դրանից երկու տարի հետո՝ 1443 թվականին, նույն Զաքարիա եպիսկոպոսը ակտիվ մասնակցութիւն է ունենում Կիրակոս կաթողիկոսին հայրապետական Աթոռից զրկելու և Գրիգոր Մակվեցուն կաթողիկոս ընտրելու գործում<sup>12</sup>:

Հավուց թառի մասին հաջորդ տեղեկութիւնը վերաբերում է 1458 թվականին՝ մի ձեռագիր շարականի հետևյալ հիշատակարանում.

«... Գրեցաւ ի Զէ. (1458), ի հայրապետութեան Տեան Գրիգորի, և սուրբ և ի գերահռչակ ուխտս, որ կոչի Հայոց թառ, ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչի, և երկնաման սուրբ խորանաց, և հրաշափառ սուրբ Կաթողիկէիս, և լուսոյ Մաւր Սուրբ Աստուածածնի, և սուրբ Աշոյն Թաղէտի առաքելոյ և Սուրբ Յակոբ Նշանին, ձեռամբ փծուն գրչի Ստեփանոս կրանաւորի, ի խնդրոյ և յարգեանց Յովհաննէս կրօնաւորի»<sup>13</sup>:

Հավուց թառի մասին առանձնապես հետաքրքիր ու արժեքավոր է 1464 թվականին

Հավուց թառում գրված ճաշոցի հիշատակարանը, որը մանրամասն տեղեկութիւններ է պարունակում ժամանակի քաղաքական դրութեան և վանքի ընդհանուր վիճակի մասին.

«... Արդ, այսքան և այսու ամենայնիւ լցեալ ի բարի յարմատոյ յառաջ եկեալ սուրբ վարդապետն Դանիէլ եկն ի սուրբ ուխտս Հայոց թառ և միաբան եղև Սուրբ Ամենափրկչիս և այլ սրբութեանցս: Եւ մեծաւ յուշով և փափաքմամբ սիրով ձեռն էարկ զսուրբ և երկնաման և փառաւոր Կաթողիկէ եկեղեցիս. և վերստին կրկին զարդարեաց և սալեց և նորոգեաց...»:

...Արդ, և ես՝ անարժան ու սուտանուն աբեղայ Ստեփաննոս, որ ի վաղ ժամանակաց կայր բնական սէր և եղբայրութիւն, որ և մի վարպետի աշակերտեալ էինք ի տղայութենէ հասակից և ի պնակիտս, և սա խնդրեաց զսուրբ տառս և զգանձս աստուածային. և ես՝ անարժանս՝ հարկէցայ և զբեցի զՍուրբ գիրքս՝ զգանձս աստուածային վասն սիրոյ նոր տեղար անձամբ իմով ի դառն և ի դժուար ժամանակի, որ ի մեղացն եկն ի վերայ մեր ի յանարինաց և յայլակրանից և ի շար բռնաւորաց. ի խանութեան Զահանշահին՝ որդոյ Ուսուֆին, որ մտաւ ի խորասան, և է (?) տարի զաշխարհս սահան և երբուն պահաց՝ ի հարկապահանջութիւն, ի տառապանս և ի շարշարանս, յայնպէս և հայր զորդիս ուրանային. ի հայրապետութեան Տեան Գրիգորի, որ նորոգեաց զՍուրբ էջմիածինն... ի թվիս Հայոց ԶԺԳ (1464), ի սուրբ յԱթոռս Ամենափրկչիս, ի սուրբ ուխտս Հայոց թառ: Գրեցաւ սուրբ տառս ձեռամբ Ստեփանոս անարժան արեղայի, ի սէր Դանիէլ վարդապետի: Արդ, որք աւագութիւնս մանէ կարգալով կամ արինակելով, ի շրջաշրջ զստացող սորայ զվարդապետն... և զմիաբանքս Սուրբ Ամենափրկչիս՝ զՏէր Սարգիս փակակալ, զՏէր Յակոբ, զՏէր Մաթէոս, և զսիրասնունդ որդիքս մեր և հոգելից աշակերտքս՝ կուսակրան սուրբ քահանայքս, զկազմող սորս զՏէր Յովսէփ և զՏէր Յոհաննէս...»<sup>14</sup>:

Քուրք-թաթարական տիրապետութեան ժամանակներում, երբ ողջ ժողովուրդը և Եկեղեցին տնջում էին ծանր հարկերի տակ, ուր հայրն անգամ ուրանում էր իր հարազատ զավակներին, այսպիսի անասելի դառն պայմաններում Հավուց թառի վանքը ոչ միայն պահպանելիս է եղել իր գոյութիւնը, այլև շարունակել է իր մշակութային-կրթական հանրագումար աշխատանքը:

Հավուց թառի մասին այնուհետև հիշատակվում է 1465—1471 թվականներին Նղ-

9 Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատութիւնը, էջ 315—316:

10 «Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իրոց, արարեալ Քովմա վարդապետի Մեծոփեցոյ», Փարիզ, 1860 թ., էջ 53:

11 Նույն տեղում, էջ 61:

12 «Քովմա Մեծոփեցու հիշատակարանը», Թիֆլիս, 1892 թ., էջ 52, 78:

13 Լ. Ս. Խաչիկյան, «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451—1480), Երևան, 1958 թ., էջ 99:

14 Նույն տեղում, էջ 214:

վարդի և Հավուց թառի վանքերում գրված Ավետարանների հիշատակարաններում<sup>15</sup>։

Հավուց թառի վանքը նկատելի չափով ուժեղանում է ժե դարի վերջին քառորդում. ահա թե ինչ է հաղորդում այդ մասին Սիմեոն կաթողիկոս Երևանցին.

«Արդ, վանքս այս ի յերկրոջս ունի զթէմ և զվիճակ յատուկ, զԵրևան քաղաքն, զԿօնդ, զՆորագեօղ, զՇէնգաւիթ, զՋրվէժ, զգիւղաքաղաքն Գառնի, զԿոխդ, և զՀայոց թառ։ Ունի և զմլբատու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասնէն մէկ, որք են այսորիկ...»։

Այնուհետև Սիմեոն կաթողիկոսը թվում է ըստ անունների բոլոր գյուղերը, թվով ինը հատ, որոնք վանքի առաջնորդ Զաքարիա Եպիսկոպոսը գնել է 5000 գինարի ՋՋԶ (1487) թվականին։ Ապա թվում է բազմաթիվ հողաբաժիններ, որոնք նույնպես կազմելիս են եղել վանքի սեփականութունը<sup>16</sup>։

Զաքարիա Եպիսկոպոսի մահից հետո, ստեղծված քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով, Հավուց թառի վանքը խիստ թուլանում է. նրա կալվածների մեծ մասը հափշտակում են թաթար խաները, գյուղացիութունը հրաժարվում է տասանորդ վճարելուց։ Որոշ գյուղեր ամայացել ու անմարդարենակ էին դարձել։ Զաքարիային հաջորդող Համադասպ Եպիսկոպոսին հաջողվում է մասամբ վերականգնել նախկին կալվածները, սակայն վանքն իր առաջվան հզորութունն այլևս չի հասնում<sup>17</sup>։

ԺՁ դարում Հավուց թառի մասին եղած տեղեկութունները շատ ահամանափակ են։ Գրիգոր Դարանաղեցին տեղեկացնում է, որ հայոց Բարսեղ կաթողիկոսի դեմ դարի կեսերին աաստամբած Եպիսկոպոսների թվումն էր և Հավուց թառի Եպիսկոպոսը՝ առանց անունը հիշատակելու.

«Նաև մեծամեծ հռչակաւոր վանորէից Եպիսկոպոսքն եղեն ապստամբք ի կաթողիկոսէն Բարսեղէ և եղին հակառակ կաթողիկոսը, որպէս Յոհաննակալանացն և Կեչարուն և Հաղարծան և Հաւուց թառին...»<sup>18</sup>։

Այդ ժամանակաշրջանի վերաբերյալ Հավուց թառի մասին առանձին տեղեկութուններ պարունակվում են նաև որոշ ձեռագրերի

հիշատակարաններում, որոնցից մեջ ենք բերում անհրաժեշտ մասերը.

«... Արդ, սկիզբն սորա եղև ի յանեղաշէն և աստուածարենակ գեաւղն Քանաքեռ և կատարումն եղև ի մեծ մենաստանիս Հայու թառա, ընդ հովանեաւ Ամենափրկչին և Սուրբ Աստուածածնին և ի յայլ սրբութեանցն, որք աստ կան հաւաքեալ. զբեցաւ գիրքս ի թվականիս հայոց ՋՋԹ (1543)։ Եւ սկիզբն գրոյս եղև յուլիս Բ. և կատարումն աւգոստոս ԼԱ. յաղագս վայելման անձին իմոյ և մե. յու յետոյ եկելոց։

Արդ, զբեցաւ ի հայրապետութեան աղգիս Հայոց Տեառն Գրիգորի և ի յարհի Եպիսկոպոսութեան մեծ նահանգիս Արարատեան Տէր Ստեփանոսին...»<sup>19</sup>։

Այնուհետև Առաքել վարդապետ Գավրիժեցին հիշում է Հավուց թառի Մանվել Եպիսկոպոսի անունը, որը գերի է տարվում Աստվածատուր Եպիսկոպոսի հետ Սպահան, պարսից Շահաբաս առաջին թագավորի մոտ<sup>20</sup>։

Ապա Գավրիժեցին հիշատակում է Հավուց թառի առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոսին, որը մասնակից էր Սահակ կաթողիկոսին գուռ հրավիր-նամակին, որն այդ ժամանակ գյուղը վում էր Պարսկաստանի Խոյ քաղաքը<sup>21</sup>։

Այդ նույն Սահակ կաթողիկոսի հայրապետութեան ժամանակ (1624—1629) Գավրիժեցին հիշում է Հավուց թառի և Երևան քաղաքի առաջնորդ Համադասպ Եպիսկոպոսին. «և էր սայ յար խրոխտ և ճարտարաբան»<sup>22</sup>։

Համադասպ Եպիսկոպոսից հետո Հավուց թառի առաջնորդ է հիշվում Մկրտիչ Եպիսկոպոսը։

Նույն դարի կեսերին, Փիլիպոս կաթողիկոսի՝ աթոռակալութեան ժամանակ (1633—1656), Հավուց թառի առաջնորդ է հիշվում Սիմեոն վարդապետ Զուղայեցին, որը ժամանակի նշանավոր փիլիսոփաներից և ուսուցիչ անձնավորութուններից մեկն էր։ Առաքել Գավրիժեցու վկայութեամբ, Երևան քաղաքի բնակիչները դիմում են Փիլիպոս կաթողիկոսին, խնդրելով նրան, որ իրենց առաջնորդ նշանակի հիշյալ Սիմեոն վարդապետին<sup>23</sup>։

Սիմեոն վարդապետ Զուղայեցուց հետո Հավուց թառի առաջնորդներ են հիշատակ-

<sup>15</sup> Լ. Ս. Խաչիկյան, «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451—1480), Երևան, 1958 թ., էջ 232, 314, 315։

<sup>16</sup> Սիմեոն կաթողիկոս Երևանցի, «Ջամբո, վաղարշապատ, 1873 թ., էջ 277—280։

<sup>17</sup> Նույն տեղում։

<sup>18</sup> «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցու կամ Դաւանաղեցու», Երուսաղեմ, 1915 թ., էջ 303։

<sup>19</sup> Գարեգին աբեպիսկոպոս Լուսինյանց, նշված աշխատութունը, էջ 93։

<sup>20</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցայ», վաղարշապատ, 1884 թ., էջ 10։

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 179։

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 228։

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 313։

վում Հովհաննես եպիսկոպոսը 1658 թվականին, Մատթեոս Զուղայեցի վարդապետը 1671 թվականին, ապա Մարկոս վարդապետը մինչև ժէ դարի վերջերը:

1679 թվականի մեծ երկրաշարժից քանդվում են վանքի համարյա բոլոր կառույվածքները: Չնայած դրան, վանքը շարունակում է իր գոյութունը՝ որպես մենաստան:

Աստվածատուր կաթողիկոսը, ցանկանալով վերակառուցել վանքը, 1722 թվականին ձեռնամուխ է լինում այնտեղ մի նոր եկեղեցու կառուցմանը, սակայն հյուսիսային լեռնցիների արշավանքների պատճառով մնում է անավարտ: Բայց և այնպես վանքը որևէ կերպ դեռ շարունակում է իր գոյութունը:

Միմեոն կաթողիկոս Երևանցին, թվելով արքունի վավերագրերով վանքերին պատկանող կալվածները, Հավուց թառի մասին հիշատակում է, որ պարսից շահ Սուլեյմանի և հայոց Նիդազար կաթողիկոսի ժամանակով, տաճկաց ՌՂԸ թվականին, Վրդվանք որ է Ամենափրկիչն՝ [ունէր] Ա այգի յԵրևան և Ա ջրաղաց ի Գառնի»:

Իսկ շահ սուլթան Հուսեյնի թագավորության և հայոց Աստվածատուր կաթողիկոսի հայրապետության ժամանակ՝ տաճկաց ՌՃԼԱ և Հայոց ՌՃԿԶ (1717) թվականներին, «Սրբոյ Ամենափրկիչի վանացն՝ Ա այգի ի Ծնգալիթ, և Ա այգի ի Նորագեղ, և Ա այգի ի Պզտիկ գեօղն, և Ա ջրաղաց ի Գառնի»<sup>24</sup>:

1679 թվականի մեծ երկրաշարժից հետո, Հավուց թառի առաջնորդներ են հիշատակվում Ստեփանոս վարդապետը 1696 թվականին, Մաղաքիա վարդապետը 1708—1726 թվականներին, որի առաջնորդության ժամանակ Աստվածատուր կաթողիկոսը ձեռնարկեց վանքի վերակառուցմանը, Հովհաննես վարդապետը 1745 թվականին, Ազարիա վարդապետը 1749 թվականին:

Այդ Մաղաքիա, Հովհաննես և Ազարիա առաջնորդները, ինչպես տեղեկացնում է Միմեոն կաթողիկոս Երևանցին, վանքի համար Երևան քաղաքում գնում են այգիներ և առանձնատներ իրենց պարտեզներով: Իսկ Երևանի բնակիչ ոմն Մատթեոս, անզավակության պատճառով քաղաքում ունեցած իր այգին 1747 թվականին նվիրում է Հավուց թառի վանքին<sup>25</sup>:

Աբրահամ կաթողիկոս Կրետացին պատմում է, որ ինքը Հայաստանի հեռավոր վայրերը ուխտի գնալու առնչությամբ (1734—1735 թվականների ժամանակաշրջանում)

այցելում է նաև Հավուց թառի վանքը և երկու գիշեր մնում այնտեղ<sup>26</sup>:

Ժ՛ դարի երկրորդ կեսի սկիզբներին, հյուսիսային լեռնցիների կրկնվող արշավանքների պատճառով, Հավուց թառի վանքը լքվում է և ամայանում:

Միմեոն կաթողիկոս Երևանցին 1763 թվականի համար գրում էր, որ «ամայի էր վանքս այս»: Անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիսին 1813 թվականին այցելելով Հավուց թառ, որը ինքն էլ տեղական այլազգի բնակիչների ձեռով անվանել է Կըզըլ-կալա (կարմիր բերդ)՝ գտել է այն ամայի վիճակում<sup>27</sup>:

Գևորգ Դ կաթողիկոսը 1868 թվականին հատուկ կոնդակով Գեղարդավանքի վանահայր Միքայել վարդապետին միաժամանակ նշանակում է Հավուց թառի վանահայր, հանձնարարելով նրան վերակառուցել և վերականգնել վանքը: Սակայն Վեհափառի այդ կոնդակը մնում է անիրագործելի<sup>28</sup>:

Հավուց թառի վանքը Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկն է: Նա եղել է եպիսկոպոսանիստ վայր, ունեցել է իր հատուկ թեմը, որի կազմի մեջ մտել է նաև Երևան քաղաքը, ուստի որպես կանոն Հավուց թառի առաջնորդը միաժամանակ հանդիսացել է Երևան քաղաքի առաջնորդը և ներգործոն դեր է խաղացել ներկեղեցական կյանքում:

Մատենադարանի աղբյուրները «բարձրադիտակ, ականաւոր և գերահռչակ սուրբ ուխտ», «հռչակաւոր, բազմաժողով մեծ մենաստան», «հռչակաւոր, աստուածաբնակ ուխտ», «երկնահասնգէտ և սուրբ ուխտ», «հրաշալի ուխտ», «մեծ մենաստան» և այլ մեծագով անուններով են կոչում այն: Իսկ Կիրակոս Գանձակեցի պատմիչը այն դասում է Արևելյան Հայաստանի գլխավոր վանքերի շարքը, ասելով. «... Եւ գլխաւոր վանորայքն Սանահինն, և Գետիկ, և Հաւարծին, և Կեշառուս, և Հաւուց թառ...»<sup>29</sup>:

Հավուց թառի վանքը նշանավոր է եղել նաև իր հատուկ դպրոցով: Ժ՛ դարի նշանավոր եկեղեցական գործիչ և հայտնի գրիչ Մանվել Բջնեցին, Հավուց թառի ամենափրկիչ մասունքին նվիրած իր ընդարձակ գանձում վանքի մասին գրում է.

<sup>26</sup> «Աբրահամ կաթողիկոսի Կրետացայ Պատմութիւն անցիցն ի փոց և Նադր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870 թ., էջ 6:

<sup>27</sup> Հ. Հակոբյան, «Ուղևորութիւններ, Զ, Ճանապարհորդութիւն Ջեյմս Մորիսի-Թավրիզից Երևան» Երեւան, 1934 թ., էջ 315—317:

<sup>28</sup> «Ամենափրկիչ մենաստան ի Հայոց թառ», «Արարատ», 1871 թ., № 8, էջ 331:

<sup>29</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 295:

<sup>24</sup> «Ջամբո», էջ 140—141:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 279:

«Յընծա հրաշարան,  
Ով համալսարան,  
Ուխտ հռչակ անուան.  
Սուրբը մենաստան.  
Հայու թառ անուան,  
Թառ թարգմանութեան»:

Բազմաթիվ ձեռագրեր գրվել և արտագրվել են Հավուց թառում, կամ գրվել ուրիշ տեղ, առաջ նվիրվել են այդ վանքին: Ձեռագրերի վերջապատականներից պարզվում է, որ մեծ թիվ են կազմել այստեղ գրիչներն ու աշակերտները: Հատկապես նշանավոր են եղել Վարդգիսը և ուսուցիչներ Դավիթ քահանան, Մխիթար ուսուցիչը, Գրիգորը, Ստեփանոս Արտուրյանը, Ստեփանոս արքեպիսկոպոսը, Մյուս Գրիգորը, Դանիել վարդապետը, փակակալ Հովհաննես քահանան, Մյուս Հովսեփը, Վարդը, Պողոսը, Սիմեոն փիլիսոփա վարդապետը և շատ ուրիշներ: Գրոցն ունեցել է նույնիսկ իր թուղթ պատրաստողները, գիրք կազմողներն ու նկարաչապարտողները: Այստեղ ուսումնասիրվել են ոչ միայն կրոնա-բարոյական և աստվածաբանական գիտություններ, այլև բնագիտություն, փիլիսոփայություն, քերականություն, լեզուաբանություն, նկարչություն և այլ առարկաներ:

Երգ-երաժշտության ասպարեզում մեծ հռչակ է վայելել վանքի առաջնորդ Եղիա Եպիսկոպոսը, որի մասին Կիրակոս Գանձակեցին հետևյալն է գրում.

«Եղիայ ի Հաուց թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան հնչել. եթէ բարձր և թէ ցած, և ոչ հարստահարել ընկեր զընկեր»<sup>30</sup>:

Առանձնապես հռչակված է եղել Սիմեոն Զուղայեցի վարդապետը որպես փիլիսոփա, բնագետ, բնագիտ, քերականագետ, հոստոր և թարգմանիչ: Դրա մասին շատ գովեստով է խոսում Առաքել վարդապետ Դավրիժեցին.

«... Արդ՝ նոյն Սուրբ Հոգին պարբերեաց նմա բան վճիտ և գերապանծ և շնորհալի ի բարոզութիւնս, ի հակաճառութիւնս, ի մեկնութիւնս Աստուածաշունչ Գրոց, կամ արտաքին գրոց, ի բնական բնութիւն, և ի փիլիսոփայական արուեստս, անհամեմատ և գեր ի վերոյ եղև քան զամենայն վարդապետս ժամանակիս այսր, որ ամենբնան խոնարհեալ առ նա ուսանէին ի նմանէ դասիւ և այլ կերպիւ...»<sup>31</sup>:

<sup>30</sup> Կիրակոս Գանձակեցի. Էջ 162:

<sup>31</sup> Առաքել Դավրիժեցի. Էջ 309—311:  
(Նառուակեի)